

I. Նպատակը

Անգլերենի սահմանափակ իմացության (ԱՍԻ) այս Ծրագիրը ներկայացնում է այն հիմնադրույթները, որոնց շրջանակում Կալիֆորնիայի Առաջին ատյանի դատարանը (Լոս Անջելես քաունթի) («Դատարան») ԱՍԻ անձանց համար ապահովում է արդարադատության հավասար հասանելիություն՝ համաձայն 1964 թ. Քաղաքացիական իրավունքների մասին Օրենքի Տիտղոս VI-ի ու դրա կարգավորիչ ակտերի, Անգլերենի սահմանափակ իմացությամբ անձանց համար ծառայությունների հասանելիության բարելավման մասին Գործադիր հրաման 13166-ով (65 Fed. Reg. 50,121 (Aug. 16, 2000)) սահմանված կարգով: ԱՍԻ Ծրագիրը հաշվի է առնում Անգլերենի սահմանափակ իմացությամբ անձանց նկատմամբ ազգային ծագումից բխող խտրականության մասով 1964 թ. Քաղաքացիական իրավունքների մասին Օրենքի Տիտղոս VI-ի կիրառման կարգի մասին ԱՄՆ Արդարադատության նախարարության կողմից 2000 թվականին հրապարակված ԱՍԻ Ուղեցույցը, 65 Fed. Reg. 50,123 (Aug. 16, 2000) և վերջինիս կողմից 2002 թվականին հրապարակված ԱՍԻ Ուղեցույցը Դաշնային ֆինանսական օժանդակություն ստացողներին՝ Անգլերենի սահմանափակ իմացությամբ անձանց նկատմամբ ազգային ծագումից բխող խտրականության՝ Տիտղոս VI-ով սահմանված արգելքի վերաբերյալ, 67 Fed. Reg. 41,455 (June 18, 2002)%⁶

II. Կարիքների գնահատում և տվյալների հավաքում. Կալիֆորնիայի Առաջին ատյանի դատարան, Լոս Անջելես քաունթի

Լոս Անջելես քաունթի ԱՍԻ անձանց լեզվական կարիքները բավարարելու առումով, քաունթի ժողովրդագրական բազմազանությունն ու չափսը Դատարանին յուրօրինակ մարտահրավերի առջև են կանգնեցնում: Դատարանը Լոս Անջելես քաունթի 4,000 քառ. մղոն տարածքով մեկ ցրված մոտ 38¹ դատարանային շենք ունի: Քաունթիում 224 տարբեր լեզվով խոսող մոտ 10 միլիոն բնակիչ կա: Լոս Անջելես քաունթիում 140 ինքնատիպ մշակույթ ունեցող բնակչություն կա, և քաունթի բնակիչների 57%-ը խոսում է անգլերենից բացի մեկ այլ լեզվով: Այդ թվից 27%-ը հայտնում է, որ անգլերենին ոչ շատ լավ է տիրապետում: Ավելին, բնակչության փոփոխություններին զուգընթաց, տարեց տարի փոփոխվում են նաև գոյություն ունեցող լեզվական կարիքները:

2017 օրացուցային տարում Դատարան ներկայացված թարգմանչական ծառայությունների հայտերի 92%-ն իսպաներենի թարգմանիչների համար են եղել: 2017 թվականին կորեերեն, մանդարին, հայերեն (արևելահայերեն), վիետնամերեն խոսողները կազմել են Դատարան թարգմանչական ծառայության հայտ ներկայացրածների ևս չորս տոկոսը (4%): Լոս Անջելես քաունթիում ժողովրդագրական զարգացման միտումները հասկանալու և լեզվական ծառայությունների կարիքները գնահատելու նպատակով Դատարանն ուսումնասիրում է մարդահամարի տվյալները, համայնքային միջոցառումներից ստացվող հետադարձ կապը, ինչպես նաև իրավաբանական ծառայությունների և այլ համայնքային ոչ-շահութաբեր կազմակերպությունների տրամադրած տեղեկատվությունը: Դատարանը սերտորեն հետևում է դատական նիստերի ընթացքում թարգմանչական ծառայությունների տրամադրման հայտերին, և իր թարգմանչական անձնակազմի համալրման խնդիրները կարգավորում է ըստ այդմ:

Դատարանը նաև ակտիվորեն մասնակցում է Կալիֆորնիայի Արդարադատության խորհրդի կողմից յուրաքանչյուր հինգ տարին մեկ անցկացվող լեզվական կարիքների գնահատման գործընթացին, ի կատարումն Կառավարման Օրենսգրքի (Government Code) Բաժին 68563-ի: Այդ գնահատման շրջանակներում Դատարանն Արդարադատության խորհրդին տեղեկատվություն է ներկայացնում Լոս Անջելես

¹ 2018 թՖառաջին եռամսյակում նախատեսվում է դատարանի ևս երեք նոր շենքի բացում՝ Հոլիվուդի Դատարանի շենքը, Սփրինգ փողոցի Դատարանի շենքն ու Ուիթթերի Դատարանի շենքը:

**ԿԱԼԻՓՈՐՆԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ (ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ԶԱՌԻՆԹ)
ԱՆԳԼԵՐԵՆԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ (ԱՍԻ) ԾՐԱԳԻՐ**

քաունթիում Դատարանի լեզվական ծառայություններից օգտվողների վերաբերյալ: Արդարադատության խորհուրդը համադրում և վերլուծում է նահանգի առաջին ատյանի բոլոր 58 դատարաններից ներկայացված տեղեկատվությունն ու գեկույց է ներկայացնում նահանգի օրենսդրին:

III. Բանավոր լեզվական ռեսուրսները

A. Դատարանի աշխատակիցները Դատարանի Լեզվական Ծառայությունների անբաժանելի մասն են

Լոս Անջելես քաունթիի 10 միլիոնանոց բնակչության վառ ժողովրդագրական բազմազանությունը Դատարանին հնարավորություն է տալիս ունենալ ներկայացուցչական անձնակազմ: Ուստի, Դատարանի աշխատակիցներից շատերը բավարար կերպով տիրապետում են դատարանի ծառայություններից օգտվող ԱՍԻ անձանց համար օգտակար անհրաժեշտ լեզվական կարողությունների:

1. ԴԱՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ

Դատական նիստերին թարգմանություն ապահովելու նպատակով Դատարանում աշխատում է Կալիֆորնիայի նահանգի կողմից վավերագրված կամ գրանցված մոտ 400 դատական թարգմանիչ: Այդ թարգմանիչներն ունակությունների մանրակրկիտ քննություն են հանձնում՝ ինչպես անգլերենից, այնպես էլ իրենց աշխատանքային լեզվից (լեզուներից): Նրանցից նաև պահանջվում է յուրաքանչյուր 24 ամիսը մեկ ավարտել մասնագիտական կատարելագործման 30 ժամ դասընթաց, ինչպես նաև էթիկայի դասընթաց: Նրանց նաև ներկայացվում են վավերագրման/գրանցման հետ կապված այլ պահանջներ, ինչպես նաև պահանջ՝ ենթարկվելու մասնագիտական էթիկայի կանոններին: Իր անձնակազմի կարողություններն ընդլայնելու նպատակով, Դատարանը պայմանագրային հիմունքներով աշխատում է նաև անկախ դատական թարգմանիչների հետ:

Եթե մանրակրկիտ ջանքերի արդյունքում հնարավոր չի լինում վկայագրված կամ գրանցված դատական թարգմանիչ գտնել, ապա Կառավարման օրենսգրքի Բաժին 68561(c)-ի հիմունքով Դատարանը կարող է օգտվել ժամանակավորապես որակավորված թարգմանիչ ծառայությունից: Նախքան նման թարգմանիչ ծառայությունից օգտվելը, Կալիֆորնիայի Դատարանի կանոնների Կանոն 2.893-ը պահանջում է, որպեսզի Դատարանը հարցուփորձ անի թարգմանիչ ունակությունների, մասնագիտական փորձի, և հնարավոր շահային հակասությունների մասին, և վերջնական եզրակացության հանգի թարգմանության նպատակներին տվյալ անձի համապատասխանության վերաբերյալ: Այդ ընթացակարգն իրականացնելուց հետո, Նախագահող Դատավորը, կամ նրա հանձնարարությամբ մեկ այլ պաշտոնյա ժամանակավորապես որակավորում է տվյալ անձին՝ դատական նիստին թարգմանչական ծառայություն տրամադրելու համար:

2. ԵՐԿԼԵՉՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ ԵՎ ԿԱՄԱՎՈՐՆԵՐ

Դատարանը մատնանշում է իր երկլեզու աշխատակիցներին, ստուգում է օտար լեզվի նրանց իմացությունն ու վկայագրում նրանց իբրև երկլեզու: Այդ աշխատակիցներին իբրև երկլեզու դասակարգելուց հետո, Դատարանը նրանց վճարում է իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս հանրության հետ շփվելու ընթացքում իրենց տրամադրած լեզվական ծառայությունների համար:

Կամավորներն ու ինտերններն էլ ավելի են ընդլայնում Դատարանի լեզվական ռեսուրսները: Այդ նպատակով, Դատարանը նախաձեռնող կերպով լեզվական կարողություն ունեցող ինտերններ ու կամավորներ է հավաքագրում օգնելու, որպեսզի Դատարանի հետ առնչվող ԱՍԻ անձինք հասկանան ու լրացնեն դատարանի

**ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ (ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՌԻՆՔԻ)
ԱՆԳԼԵՐԵՆԻ ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ (ԱՍԻ) ԾՐԱԳԻՐ**

Վաստաթղթերը դատարաններում ստեղծված Ինքնասպասարկման կենտրոններում: Այդ առումով, որակյալ, նվիրված երկլեզու կամավորների հատկապես արդյունավետ ու արժեքավոր աղբյուր է եղել Դատարանի դափնեկիր ծրագիրը՝ Կալիֆորնիայի Արդարադատության գորասյունը (California JusticeCorps): Այն հանրային ծառայության ծրագիր է, որի շրջանակներում քոլեջն ընթացիկ տարում կամ վերջերս ավարտած շրջանավարտները պատրաստություն են անցնում՝ օգնելու դատարանում ինքնուրույն ներկայացված կողմերին դատական համակարգում դյուրությամբ կողմնորոշվել:

IV. Լեզվական օժանդակության ռեսուրսներ

A. Թարգմանիչները դատարանի նիստերի դահլիճում

1. Դատարանի նիստերի դահլիճում թարգմանիչների ներկայությունը

Դատական նիստերի ընթացքում Դատարանը բանավոր լեզվի վկայագրված/գրանցված Դատական թարգմանչի անվճար ծառայություններ է տրամադրում Դատարանի հետ առնչվող ԱՍԻ անձանց, բոլոր կարգի գործերում:

Դատարանն իսպաներենի թարգմանիչներ է ապահովում այն դատարանի դահլիճներում, որտեղ քրեական, անչափահասների, երթևեկության, ընտանեկան իրավունքի, կտակների և ժառանգության, հոգեկան առողջության, սեփականության կամ ունեցվածքի ապօրինի զբաղեցման, մանր հայցերի, կամ սահմանափակ բնույթի այլ քաղաքացիական գործեր են լսվում:

2. Դատական նիստին թարգմանչի ներկայության կարիքի որոշումը

Լոս Անջելես քաունթի Առաջին ատյանի դատարանն ԱՍԻ անձանց բազմաթիվ հնարավորություններ է տալիս նախքան դատարան ներկայանալը լեզվական ծառայությունների հարցում իրենց կարիքները որոշելու համար: Սեփականության կամ ունեցվածքի ապօրինի զբաղեցման, մանր հայցերի, կտակների և ժառանգության, երթևեկության և այլ քաղաքացիական գործերով Դատարանից օգտվող այն ԱՍԻ անձանց համար, ովքեր իսպանախոս չեն, Դատարանն ունի առցանց դարպաս, որի միջոցով նրանք կարող են կանխավ, նախքան իրենց նիստը, թարգմանիչ խնդրել: Դարպասը հասանելի է հետևյալ հղմամբ. lacourt.org/irud/ui/index.aspx: Դատարանի այն դահլիճներում, ուր նման կարգի գործեր են լսվում, Դատարանն արդեն իսկ իսպաներենի թարգմանիչներ հատկացնում է, ուստի իսպանախոս ԱՍԻ անձինք թարգմանչի ծառայություններ պատվիրելու կարիք չունեն:

Երբ ԱՍԻ անձն առաջին անգամ ներկայանում է դատարանի դահլիճ, դատարանի աշխատակիցները որոշում են՝ արդյո՞ք այդ անձը թարգմանչի կարիք ունի: Ըստ Կալիֆորնիայի Դատական վարչարարության չափանիշների (California’s Standards of Judicial Administration) Չափանիշ 2.10-ի, Դատական պաշտոնյան սովորաբար քննում է կողմին կամ վկային, որոշելով՝ արդյո՞ք թարգմանչի կարիք կա, եթե (1) որևէ կողմ կամ փաստաբան նման քննության դիմում է ներկայացնում, կամ (2) Դատական պաշտոնյան այն տպավորությունն ունի, որ կողմերից կամ վկաներից մեկը կարող է չհասկանալ կամ չխոսել անգլերեն այնպես բավարար, որպեսզի ի վիճակի լինի արդյունավետորեն մասնակցել դատական նիստին:

B. Դատարանի դահլիճից դուրս տրամադրվող լեզվական ծառայություններ

Դատարանը հանրության հետ կապի կետերում ապահովում է երկլեզու վկայագրված աշխատակիցների ներկայություն: Դատարանն իր հանրային կապի կետերում հերթապահող աշխատակիցներին տրամադրում է «Ես խոսում եմ» (“I Speak”) մակագրությամբ քարտեր, որպեսզի դատարանի ծառայություններից օգտվող ԱՍԻ անձինք հնարավորություն ունենան նշել, թե ինչ լեզվով են իրենք գերադասում հաղորդակցվել: Դատարանն իր աշխատակիցներին նաև հնարավորություն է տալիս

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ (ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՈՒՆՈՒԹ) ԱՆԳԼԵՐԵՆԻ ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ (ԱՍԻ) ԾՐԱԳԻ

օգտվել Դատարանի ներքին կայքում տեղադրված իրավաբանական եզրերի բառարաններից, հետևյալ լեզուներով. արաբերեն, արևմտահայերեն, հինդի, հմոնգ, միեն, փենջաբերեն, ռումիներեն, ռուսերեն, իսպաներեն, ուրդու և վիետնամերեն:

Հաշվի առնելով Լոս Անջելես քաունթի աներևակայելի լեզվական բազմազանությունը՝ երբ դատարանի ծառայություններից օգտվող ԱՍԻ անձը հանրային շփման որևէ կետում կարիք ունի լեզվական օգնության, սակայն երկլեզու աշխատակցի ներկայությունը հնարավոր չէ ապահովել, ապա Դատարանը տրամադրում է հեռակա հեռախոսային ծայնային թարգմանչական սպասարկում՝ օգտվելով լեզվական ծառայությունների կողմնակի մատակարարից:

Դատարանը ձգտում է նպաստել ԱՍԻ անձանց հաղորդակցության ապահովմանը՝ նրանց լեզվական համապատասխան ծառայություններ տրամադրելով, մասնավորապես, հետևյալ միջոցներով.

- Ինքնասպասարկման տասներկու կենտրոն համալրել երկլեզու աշխատակիցներով, ինտերններով ու կամավորներով, ովքեր տարբեր լեզուներով օժանդակություն կապահովեն ԱՍԻ անձանց: Դատարանից օգտվող ԱՍԻ անձանց օգնելու նպատակով Կենտրոնները նաև կարող են օգտագործել հեռակա հեռախոսային ծայնային լեզվական ծառայություններ:
- Անցկացնել սեմինար պարապմունքներ՝ դատարանի ծառայություններից օգտվողներին հայերեն ու իսպաներեն գիտելիք և օժանդակություն տրամադրելու համար այնպիսի հարցերում, ինչպիսիք են լուծարումը, ընտանեկան բնությանն արձագանքման միջոցառումները, զսպող հրամաններն ու ընտանեկան իրավունքին առնչվող դատական որոշումները:
- Երկլեզու աշխատակիցներ հատկացնել ընտանեկան իրավունքի գործերով ինամակալության ու այցելության խնդիրներում միջնորդություն իրականացնելու համար:
- Ապահովել Ինքնասպասարկման կենտրոնի աշխատակազմի կողմից ԱՍԻ բնակչությանը սպասարկող համայնքային ծառայությունների մատակարարների հետ համատեղ սեմինար պարապմունքների անցկացումը:
- Առցանց ավտոմատացված օգնություն տրամադրել երթևեկության հարցերով դատական գործերի կողմերին՝ օգտագործելով տեքստը խոսքի վերածող ժամանակակից տեխնոլոգիա այն հինգ հիմնական լեզուներով, որոնց առնչությամբ Դատարանը թարգմանչական ծառայության ամենամեծաթիվ դիմումներն է ստանում:
- Դատարանի կայքում հղումներ տեղադրել Արդարադատության խորհրդի Ինքնասպասարկման կենտրոններում ներկայացվող առանցքային տեղեկատվությանն ու փաստաթղթային ձևերին՝ իսպաներեն, կորեերեն, հայերեն (արևելահայերեն), չինարեն, վիետնամերեն և այլ լեզուներով: և
- Ունենալ Երթևեկության գործերով վճարման փոխգործունակ համակարգի (Traffic Interactive Payment System, TIPS) հեռախոսային գիծ՝ իսպաներեն:

C. Թարգմանված փաստաթղթային ձևեր և փաստաթղթեր

Առավել հաճախակի գործածվող փաստաթղթային ձևերի ու փաստաթղթերի հասանելիության ապահովումն ԱՍԻ անձանց համար նպաստում է դատական ծառայությունների հասանելիության բարելավմանը, և դատարանի ծառայություններից օգտվող ԱՍԻ անձանց թույլ է տալիս հասկանալ դատաիրավական գործընթացն ու ավելի ակտիվորեն ներգրավվել դրանում: Այդ նպատակով Արդարադատության խորհուրդը ստեղծել է Ինքնասպասարկման տեղեկատվության կայք՝ իսպաներեն, արևելահայերեն, չինարեն, կորեերեն ու վիետնամերեն, որն ուղեցուցային-տեղեկատվական նյութեր է պարունակում զանազան բնույթի գործերի վերաբերյալ: Այս կայքում ներկայացված են նաև թարգմանված փաստաթղթային ձևեր, որոնք Դատարանից կարելի է ձեռք բերել

**ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ (ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՌԻՆՔԻ)
ԱՆԳԼԵՐԵՆԻ ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ (ԱՍԻ) ԾՐԱԳԻ**

Ինքնասպասարկման կենտրոններում:

Ի լրացումս, դատարանի ծառայություններից օգտվող ԱՍԻ անձանց հետ հաղորդակցությունն ապահովելու նպատակով, Դատարանը.

- Ատենակալային ծառայությունների մասին տեղեկատվության իսպաներեն տարբերակում տեղեկատվություն է ներառում նաև ատենակալների կանչման և հեռախոսային սպասարկման վերաբերյալ;
- Դատարանի դահլիճի անձնակազմին տրամադրում է նիստի հետաձգման փաստաթղթային ձևեր իսպաներեն, կորեերեն, արևելահայերեն), չինարեն և վիետնամերեն լեզուներով՝ անձնակազմին հնարավորություն տալով դատական վարույթի կողմերին պարզ տեղեկատվություն տրամադրել գործի վերաբերյալ;
- Շենքերի մուտքերին ցուցանակներ է տեղադրում իսպաներեն, կորեերեն, արևելահայերեն, չինարեն ու վիետնամերեն՝ Դատարանից օգտվող ԱՍԻ անձանց տեղեկացնելով (անվճար) թարգմանչական ծառայությունների հասանելիության վերաբերյալ;
- Դատարանի փակման մասին ցուցանակներ է տեղադրում իսպաներեն, կորեերեն, արևելահայերեն, չինարեն ու վիետնամերեն;
- Հաճախորդների բավարարման հարցախույզի քարտեր է պահում այն հինգ հիմնական լեզուներով, որոնցով թարգմանություն է տրամադրվում; և
- Իր կայքում լեզվական ծառայության հարցերով բողոքի ձև է տեղադրում իսպաներեն, կորեերեն, հայերեն (արևելահայերեն), չինարեն ու վիետնամերեն:

V. Դատական և դատարանային անձնակազմի կատարելագործում

ԱՍԻ անձանց հետ հաղորդակցման մեթոդների հարցում Դատարանը հանձնառու է իր դատական պաշտոնյաների և աշխատակիցների ունակությունների կատարելագործմանը: Լեզվական մատչելիության խնդիրները ներառված են Դատարանի Կրթության և զարգացման բաժնի ու դրա Դատաիրավական կրթության սեմինարների ծրագրի կողմից առաջարկվող դասընթացներում: Առաջարկվող կրթական հնարավորություններն այս պահին հետևյալն են.

- Նոր դատավորների կողմնորոշում;
- Դատավորների կոլեգիա;
- Նոր աշխատակիցների կողմնորոշում և հրահանգում;
- Դատարանի մասին ընդհանուր ակնարկ;
- Ընտանեկան իրավունք, քաղաքացիական և քրեական գործերով դատական նիստերի վարույթ և ընթացակարգ;
- Հաճախորդների սպասարկում. Դատարանի ծառայություններից օգտվող բազմաբնույթ անձանց կարիքների հոգում;
- Հաճախորդների սպասարկման պրակտիկան Դատարաններում;
- Բազմազանություն և մշակութային տեղեկացվածություն;
- Վավերագրված երկլեզու անձնակազմի համար իրավաբանական եզրաբանության (անգլերեն) հարցերում կատարելագործման հնարավորություն;
- Հեռախոսային վարվեցողության կանոններ;
- Դատական թարգմանչի համար անհրաժեշտ նվազագույն կատարելագործման (Court Interpreter Minimum Continuing Education, CIMCE) վկայագրված դասընթացներ;
- Լեզվական մատչելիության վերաբերյալ նահանգային մակարդակի խորհրդաժողովներ՝ լեզվական մատչելիության խնդիրներին նվիրված հատուկ

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ (ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ԶԱՌԻՆԹ)
ԱՆԳԼԵՐԵՆԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ (ԱՍԻ) ԾՐԱԳԻՐ

նիստերով; և

- Դատական թարգմանիչների օգտագործման և լեզվական իմացության հարցերում Դատական պաշտոնյաների կողմնորոշում:

Դատարանը շարունակաբար ուշադրության կենտրոնում է պահում բոլոր դասընթացները, և հիմնական ուսումնական ծրագրերի բերումով ընձեռնված հնարավորությունների սահմաններում ջանքեր է գործադրում է դատարանի ծառայություններից օգտվող ԱՍԻ անձանց վերաբերյալ տեղեկացվածության և կատարելագործման ուղղությամբ:

Ի հավելումս, Կալիֆորնիայի Դատաիրավական կրթության և ուսումնասիրությունների կենտրոնը (California Center for Judicial Education and Research) մասնագիտացված դասընթացներ է մշակել դատական պաշտոնյաների համար: Լեզվական հասանելիության ծրագրի կենսագործման աշխատանքային խումբը (Language Access Plan Implementation Task Force) և Դատական թարգմանիչների խորհրդատվական մարմինը (Court Interpreter Advisory Panel) ևս դասընթացներ են մշակում, ներառյալ տեսանյութ, որը դատական պաշտոնյաներին ներկայացնում է առաջին ատյանի դատական վարույթի շրջանակներում բանավոր լեզվի թարգմանիչ նշանակելու կարգը: Այդ տեսանյութը կարելի է գտնել նաև Դատարանի դատական պաշտոնյաների համար նախատեսված թվային գրադարանում:

VI. Հանրային կապ և տեղեկացվածություն

Դատարանի ղեկավարությունը համայնքային կապի և տեղեկացվածության միջոցառումներ է իրականացնում տրամադրվող զանազան ծառայությունների մասին տեղեկատվությունը բոլոր լեզուներով խոսողներին հասցնելու նպատակով: Կապի և տեղեկացվածության ջանքերը ներառում են հետևյալը.

- Համագործակցություն պետական գործակալությունների, հանրային և մասնավոր կրթական հաստատությունների, ինչպես նաև իրավաբանական ծառայությունների հետ, որոնք սպասարկում են ներգաղթած և օտարալեզու համայնքներին, և հանրության հետ կապի հանդիպումներ;
- Ծառայության մատակարարներ, օրինակ՝ [Legal Aid Foundation of Los Angeles-ը, Neighborhood Legal Services-ը, Bet Tzedek-ը, Public Counsel-ը, ևն]:

VII. Անգլերենի սահմանափակ իմացության ծրագրի մասին հանրային ծանուցումն ու դրա գնահատումը

A. Անգլերենի սահմանափակ իմացության ծրագրի հաստատումն ու ծանուցումը

Դատարանի Գործադիր պաշտոնյայի/քարտուղարի կողմից Անգլերենի սահմանափակ իմացության ծրագրի հաստատման պես այն տեղադրվում է Դատարանի հանրային կայքում: Ծրագրին հղում է տեղադրվում նաև Կալիֆորնիայի Արդարադատության խորհրդի հանրային կայքում:

B. Անգլերենի սահմանափակ իմացության ծրագրի տարեկան գնահատումը

Տարին մեկ անգամ Դատարանի Լեզվական հասանելիության ծառայությունների վարիչը գնում է ծրագիրը՝ դրա համարժեքությունը գնահատելու և անհրաժեշտության դեպքում այն թարմացնելու նպատակով: Գնահատման տարրերը ներառում են հետևյալը.

**ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ (ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՌԻՆԹ)
ԱՆԳԼԵՐԵՆԻ ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ (ԱՍԻ) ԾՐԱԳԻ**

- Տեղեկություններ Դատարանի ծառայություններից օգտվելու նպատակով լեզվական օժանդակություն հայցող ԱՍԻ անձանց մասին;
- Դատարանի լեզվական հասանելիության ծառայությունների գնահատում;
- Լոս Անջելես քառնթիի ԱՍԻ համայնքներից հետադարձ կապով ստացված կարծիքների ուսումնասիրում;
- Գնահատում՝ արդյո՞ք Դատարանի անձնակազմը պատշաճ կերպով հասկանում է ԱՍԻ քաղաքականությունն ու ընթացակարգը, և դրանց կենսագործման ձևը;
- Դատարանի աշխատակիցների վերապատրաստման դասընթացներից հետադարձ կապով ստացված կարծիքների գնում:

C. Բողոքների գործընթացը

Լեզվական ծառայությունների վերաբերյալ բողոք ունեցող յուրաքանչյուր ոք կարող է գրավոր բողոք ներկայացնել: Բողոքի ձևը, որը կարող է տրամադրվել անգլերեն, իսպաներեն, կորեերեն, չինարեն, հայերեն (արևելահայերեն) և վիետնամերեն, կարելի է ներբեռնել Դատարանի կայքից և փոստով ուղարկել Լեզվական հասանելիության ծառայությունների վարչին, հետևյալ հասցեով՝ Language Access Services, 1945 S. Hill Street, Room 801, Los Angeles, CA 90007, կամ ուղարկել էլ. փաստով՝ LanguageAccess@LACourt.org-ին (Հավելված A): ԼՀԾ Վարիչը կհաստատի բողոքի ստացումը 10 աշխատանքային օրվա ընթացքում: Դատարանը կուսումնասիրի բողոքն ու իր եզրակացությունը կփոխանցի բողոքող կողմերին: Մինչ դատարանը բողոքի գործընթացին լրջությամբ է վերաբերվում, այդ գործընթացը կողմերի համար իրենց իրավաբանական գործի վերանայման շրջանակ չէ:

D. Լեզվական ծառայությունների բաժին

Եթե լեզվական հասանելիության, կամ Կալիֆորնիայի Առաջին ատյանի (Լոս Անջելես քառնթի) դատարանի Անգլերենի սահմանափակ իմացության ծրագրի մասին հարց կամ մեկնաբանություն ունեք, ապա կարող եք դիմել Դատարանի Լեզվական հասանելիության ծառայությունների բաժին, հետևյալ հասցեով.

Language Access Services (LAS)
Amy C. Blust, Administrator
1945 South Hill Street, Room 801
Los Angeles, CA 90007
(213) 745-2925
ABlust@lacourt.org

E. Անգլերենի սահմանափակ իմացության ծրագիրն ուժի մեջ մտնելու ամսաթիվը. փետրվարի 5, 2018

F. Հաստատված է.

_____ Ամսաթիվ. _____
Գործադիր պաշտոնյա/քարտուղար

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ (ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՌԻՆՔԻ)
ԱՆԳԼԵՐԵՆԻ ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ (ԱՍԻ) ԾՐԱԳԻՐ

Հավելված A



Superior Court of California, County of Los Angeles
Language Access Services
1945 S. Hill Street, Room 801
Los Angeles, CA 90012
Email: LanguageAccess@LACourt.org

ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ ԲՈՂՈՔԻ ՁԵՎ

Լոս Անջելեսի Առաջին ատյանի դատարանը հանձնառու է անգլերենին չտիրապետող անձանց համար ապահովել լեզվական ծառայությունների հասանելիություն: Եթե կարծում եք, որ Ձեզ ողջամիտ, կամ արհեստավարժ կերպով լեզվական հասանելիություն չի տրամադրվել, ապա խնդրում ենք լրացնել ու ներկայացնել այս ձևը՝ էլեկտրոնային տարբերակով կամ փոստով:

Բողոքը ներկայացնող անձը (խնդրում ենք նշել տպատառ).

Անուն, ազգանուն _____

Հասցե _____

*Հեռախոս Աշխ. ժամերին () _____ Երեկոյան () _____

Քաղաք _____ Նահանգ _____ Փոստային ինդեքս _____

Ֆաքս () _____ Էլ. փոստ _____

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՁԵՐ ԲՈՂՈՔԸ ՍՏՈՐԵՎ (խնդրում ենք նշել՝ ինչ է տեղի ունեցել, օրը, ով էր ներգրավված, վկաների անուններն ու կապի տվյալները, ինչպես նաև փաստաթղթային հիմքի առկայությունը: Խնդրում ենք կցել խնդրին վերաբերող փաստաթղթերի պատճենները, եթե կան այդպիսիք):

Գործ № _____ Վայրը/Դատարանի շենքը _____

Դահլիճ/Բաժին № _____ Ամսաթիվը _____

Ձեր բողոքը լիարժեքորեն ուսումնասիրելու համար, Լեզվական հասանելիության ծառայությունները (ԼՀԾ, Language Access Services, LAS) հավանաբար կարիք կունենան կապվել Ձեզ հետ՝ հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Խնդրում ենք նկատի ունենալ, որ եթե Ձեր բողոքը գերազանցում է ԼՀԾ-ի իրավասության շրջանակը, ապա այն կներկայացվի համապատասխան վարչություն/գործակալություն՝ ուսումնասիրման նպատակով: Բոլոր բողոքներն անհրաժեշտ է ներկայացնել փոստով՝ վերոհիշյալ հասցեով, կամ էլ. փոստով՝ LanguageAccess@LACourt.org-ին: Դատարանը կհաստատի Ձեր բողոքի ստացումը 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Ստորագրություն. _____ Ամսաթիվ. _____